# Համաձայնագիր-1
# 17.09.2019թ. կնքված N ՊԵԿ-ՀՄԱ-ԾՁԲ-3 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

**ք. Երևան** «17» հունվարի 2020թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի մի կողմից, և «Շինինդուստրիա ԳՏԿ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս Ընկերության տնօրեն՝ Կ.Շավարշյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 17.09.2019թ. կնքված N ՊԵԿ-ՀՄԱ-ԾՁԲ-3 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

**Կողմերը որոշեցին՝**

1.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12.12.2019թ. թիվ 1965-Ն որոշումը՝ Կողմերը որոշեցին երկարաձգել Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը, այն սահմանելով մինչև 2020 թվականի հուլիսի 30-ը ներառյալ:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011028363
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

**Է.Գևորգյան**

(ստորագրություն)

Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Շինինդուստրիա ԳՏԿ» ՍՊԸ
ք. Երևան, Արաբկիր 39-րդ փողոց, թիվ 2 շենք, բն. 32
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163048266999
ՀՎՀՀ 00007111
«Շինինդուստրիա ԳՏԿ» ՍՊԸ-ի տնօրեն՝

**Կ.Շավարշյան**

(ստորագրություն)

Կ.Տ